

ՄԵՆ ԿՐՈՆՔԻ ՄԸ ՀԱՄԱՐ ԽՈՐՈՒՆԿ ՀԱՎԱՏՔ



յս հոգվածով նպատակս է մեր բարեպաշտ և հավատացյալ ընթերցողներուն պարզել, բացատրել մեր քրիստոնեական կրոնքի մասին քանի մը ճշմարտութիւններ:

Աշխարհի վրա եղած բոլոր կրոնքները զանազան կերպեր ցույց կուտան մարդիկը Աստուծո առաջնորդելու: Մարդիկ կերպ մը կ'ստանան պաշտելու իրենց հասկացած Աստվածը, զանազան տարբեր կերպեր ցույց կուտան պաշտամունքի և զԱստված ճանչնալու:

Մեր քրիստոնեական կրոնքի պարագային, այլևս հեռավոր և անծանոթ Աստուծո մը փնտռութիւն պետք չկա: «Ես ձեզի հետ եմ» Իր խոսքը միշտ Փրկիչը մեզ մոտ կ'ըսէ: Այս իրողության համար փաստ չի տրվիր: Քրիստոնյան իր փորձառութեամբ միայն կրնա այս իրողության ճշմարտութիւնը զգալ, հասկնալ և ապրիլ:

Այսօր երկրի վրա բոլոր կրոնքներեն քրիստոնեութիւնը միայն ամենէն ավելի տարածված կրոնքն է: Քրիստոնեութիւնը միակն է բոլոր մշտա կրոնքներուն մէջ, որ անհասանջորեն հավատք կ'ապահանջէ իր հետևորդներին իր հիմնադրի մասին, իբրև Աստուծո Որդի:

Քրիստոսի ժամանակակից Ս. Ալեքսանդրը քարոզող մարդոց համար Անոր խոսքերը անհերքելի ճշմարտութիւններ էին: Հետագային այս համոզումը արմատացավ ու ծավալեցավ Եկեղեցւո մէջ:

Այսօր՝ աշխարհի շուրջ երկուքուկես միլիառ մարդոցմէ 800 միլիոնը պաշտոնապէս քրիստոնեութիւնը կ'աւանդի և կ'ընդունի, որով ամբողջ մարդկության մէկ Ներորդը՝ աշխարհի վրա ապրող երեք մարդերէն մեկը Քրիստոսի հետևորդ է:

Քսաներորդ դարու առավելագույն հետևորդ ունեցող մեր քրիստոնեական կրոնքը շատ փոքրիկ խումբն է մը կ'ըսենք այսօր 1900 տարիներ առաջ, երբ Եկեղեցին հիմնադրվեցավ Հոգեգալստյան օրը, Ս. Նրուսաղեմի - մէջ, Քրիստոսի հրաշափառ Ս. Համբարձումէն տասը օր հետո:

Միամտութիւն պիտի ըլլար հուսալ, որ անհամեմատորեն արագ մեծցող և տարածվող կրոնք մը կ'արեւար մնալ իր սկզբնական պարզության մէջ: Ընդհակառակը, դավանանքի և ծիսակատարության տեսակետէն այնքան տարբերութիւններ հառաջացուցին զանազան եկեղեցիներ և Քրիստոսի հետևորդներ, որ երբեմն դժվար է հավատալ, որ նույն Տէրը կ'ապաշտեն անոնք բոլորը:

Առեք, զոր օրինակ, Ավագ շաբթու կամ Ս. Զատիկի առթիւ Առաքելական Եկեղեցիներու տպավորիչ և վեհ արարողութիւններն ու պաշտամունքները Ս. Նրուսաղեմի մէջ և բաղդատեցեք քվեքըրներու կամ նորադարձ կոնգրէսներու լռիկ ու խորհրդավոր աղոթածողութիւններու հետ, կամ Հունաստանի մէջ Աթոս լեռան մենակյացներու սաղմոսերգութիւնները և Թովմաս առաքյալի հանդեպ մասնավոր ջերմեհանդութիւն և հարգանք

ցույց տվող հարցուր հազարավոր հնդիկ քրիստոնյաներու բարեպաշտական հավաքույթը ցամաքած գետի մը հունին մեջ, այրող արևին տակ։ Ու տակավին կարելի է երկարել շարքը այս այլազանությանց։

Հայն սիրտ մը և լուրջ ու խոր միտք մը կրնա սակայն այս զանազան պաշտամունքներու մեջեն տեսնել դեմքը նույն Փրկչին և լսել իր ձայնը. «Ծնե եմ, մի՛ երկնշիջի»։

Քրիստոնեությունը ուրեմն բաժնված չէ, այլ բազմապատկված ու բազմակողմանի դարձած է։

Նկեղեցին եղած է ու կմնա մեկ մարմին՝ մարմինը Քրիստոսի։ Ամեն անոնք, որոնք խաչի խորհուրդներով լեցուն նշանին տակ իրենց հավատարմությունը կհայտնեն խաչյալ ու հարուցյալ նույն Տիրոջ, կհավատան նույն Աստուծոյն։

Այս սքանչելի խորհրդին հետ հոգևոր կհաղորդակցինք ամեն անգամ, որ սուրբ պատարագի միջոցին կերգեն մեր Նկեղեցին. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ... Նկեղեցիս մի անձն եղև...»։

Խորունկ հավատքի արտահայտությունն է այս երգը։ Այսօր խոր հավատքի մը պետքը ունինք մենք այսքան դժվարությանց մեջ հավատարիմ մնալու համար քրիստոնեական սկզբունքներուն։

Այսքան կրոնական այլազանությանց մեջ խոր հավատքի պետք ունինք՝ մեր հոգևոր հավասարակշռությունը պահելու համար։

Իրեն քրիստոնյաներ, որոնք բարի սովորություններ ունին մտածելու իրենց կրոնքին ու հավատքին մասին, հետևյալ հարցերը կուզան մեր մտքին.

Ինչպե՞ս հառաջ եկավ քրիստոնեությունը։ Ինչպե՞ս տարածվեցավ, ինչո՞ւ այսքան մեծցավ, ինչո՞ւ այսքան այլազան ձևավորումներ առավ։

Այս բոլոր հարցումներուն ուղղակի պատասխաններ ունինք։ Ներկա հոգևածով կուղեմ մեջբերել երկու նամակներ, առաջին դարերեն մեզի հասած երկու թանկագին վավերագրեր, որոնք կխոսին մեր Փրկչի մասին և կապացուցեն Անոր պատմականությունը։ Կխորհիմ, թե շինիչ պիտի ըլլա այդ նամակներուն ընթերցումը։

Նամակներեն առաջինին մեջ, հռոմայեցի բժիշկ մը՝ Եսկուդապիոս Գալտիոս (Քրիստոսն հետո 62 թվականին), հռոմեական բանակի ծառայության մեջ գտնվող իր եղբորորդիին հետևյալը կգրե.

«Միրելի իմ եղբորորդի.

Քանի մը օր առաջ Պողոս անունով հիվանդ մը դարմանելու կանչվեցաւ, դեղա-

գիր մը գրեցի իրեն համար։ Հրեա ծնողքն էր, բայց հռոմեական քաղաքացի ըլլալ կթվեր։ Զարգացած և բարեկիրթ անձ մըն էր։ Ինձի ըսվեցավ, թե դատական խնդրով մը հոս կգտնվի։ Այս դատը մեր հեռավոր նահանգներու մեկ դատարանէն՝ Կեսարիայէն և կամ Արեւելյան Միջերկրական նահանգն մը փոխանցված էր այստեղ։ Զինք ինձի ներկայացուցած էին իբրև «վայրենի» և «բուռն» քնավորության տեր մեկը, որ մեր ժողովրդին դեմ կխոսի և մեր օրենքին դեմ կհակաձայնի։ Բայց ես զինք գտա շատ խելացի և պարկեշտ մեկը։

Բարեկամներես մեկը, որ Փոքր Ասիոյ մեր բանակին մեջ էր, ըսավ ինձի, թե անոր (Պողոսի) մասին լսած էր բաներ մը. թե Ուփեսոսի մեջ անծանոթ և նոր Աստուծոյ մը մասին, չգարողներ։ Հիվանդիս հարցուցի, թե ճիշտ էր այս, և թե ինք երբեք ըսած է ժողովրդին, որ մեր սիրեցյալ կայսեր կամքին դեմ ապստամբին։ Պողոս պատասխանեց ինձի, թե այն թագավորությունը, որու մասին խոսած էր, այս աշխարհին պատկանող թագավորությունն էր չէր։ Ան ավելցուց նաև տարօրինակ ասույթներ, որոնցմէ բան մը չհասկցաւ. թերևս ունեցած ջերմին պատճառով այդ բաները ըսավ։

Իր անձը մեծ ազդեցություն ձգեց վրաս, ցավեցաւ, լսելով որ Օստյան ճամբուն վրա բանի մը օր առաջ սպանված է։ Այս նամակս կգրեմ այդ պատճառով։ Հաջորդ անգամ, երբ Երուսաղեմ այցելես, կուղեմ, որ իմ բարեկամիս մասին և անծանոթ հրեա մարգարեի մասին տեղեկություններ քաղես։ Ինձ կթվի, թե այս մարգարեն եղած է իր ուսուցիչը։ Մեր գերինները Մեսիա կուշվող այս մարդու մասին շատ խանդավառ են, և անոնցմէ ոմանք բացեիքաց նոր թագավորության մը մասին կխոսին (չեմ պիտեի ինչ կնշանակե այդ)։ Կըսեն, թե այդ մարգարեն խաչված է։ Ես կուղեմ այս բոլոր ըսի-ըսանքներու մասին ճշմարտությունը իմանալ, և կմնամ քեզ նվիրյալ հորեղբայրդ՝ Եսկուդապիոս Գալտիոս»։

Շատ հետաքրքարական է կարդալ այս նամակին պատասխանը, որ վեց շաբաթ ետք Կլադիոս էնսա, բժշկի եղբորորդին գրած է. Գալլիկ յոթներորդ հետևակազորքին մեջ սպա մըն էր Կլադիոս։ Ան այսպես կապատասխանե.

«Միրելի՛ հորեղբայրս.

Ստացա նամակը և թելադրություններու անսացի։

Մեր գումարտակը երկու շաբաթ առաջ Երուսաղեմ ղրկվեցավ։ Հոն բազմաթիվ հե-

ղափոխություններ պատահեցան վերջին դարու ընթացքին, և հին քաղաքն շատ բան չէ մնացած:

Ամիս մի կրնես հոս ենք, և վաղը դեպի Բնդա կմեկնինք, ուր քանի մը արաբ ցեղեր խառնակություն հաներ են:

Այս երեկո քեզի պատասխանելու պիտի հատկացնեմ, բայց խնդրեմ մանրամասնյալ տեղեկագիր մը մի՛ ակնկալիր:

Այս քաղաքին (Երուսաղեմի) շատ մը ծերերուն հետ խոսեցա, բայց անոնցմե ոմանք միայն որոշ տեղեկություններ տվին: Քանի մը օր առաջ մանրամասնաւ մը եկավ մեր բանակատեղին: Իրմե քիչ մը ձիթալը տուղ զնեցի և հարցուցի, թե բնավ լսած է հռչակավոր Մեսիայի մը մասին, որ սպանված էր, երբ ինք տակավին երիտասարդ էր: Մանրամասնաւ ըսավ, թե շատ հստակ կերպով կհիշե այդ բանը, որովհետև իր հայրը Գողգոթա տարավ դինք (քաղաքն քիչ մը դուրս գտնվող բլուր մը), որպեսզի տեսնե մահապատիժը և իրեն ցույց տա, թե ինչ կըլլա վախճանը: Հուլայի և Օրենքի թշնամիներուն: Ան ինձի տվավ հասցեն Հովսեփ անուն անձի մը, որ մտերիմ բարեկամը եղած է նշանավոր Մեսիային, որ սպանված էր իր երիտասարդ եղած ատեն: Մանրամասնաւ ըսավ ինձի, թե ավելի լավ կընեմ, որ երթամ և Հովսեփը տեսնեմ, եթե ավելի ճշգրիտ տեղեկություններ ստանալ կուզեմ:

Այս առավոտ Հովսեփը տեսնելու գացի: Մարդը շատ ծերացած էր: Ան ձկնորս եղած էր անուշ ջուրով լճի մը վրա: Իր հիշողությունը հստակ էր, և վերջապես իրմե քաղեցի վերջնական տեղեկություններ, թե ինչեր պատահած էին այդ նեղության րեբրուն, իմ ծնեկես առաջ:

Մեր մեծ և փառավոր կայսրը Տիրերիոս գահուն վրա էր, և Պոնտացի Պիղատոս անուն պաշտոնյան Հուլայի և Սամարիո կառավարիչ էր: Հովսեփ շատ բան չի գիտեր այս Պիղատոսի մասին: Կթվի, թե պարկեշտ պաշտոնատար մը եղած է և բավական լավ անուն մը ձգած իբրև նահանգային կառավարիչ: 783 կամ 784 թվականին (ինչ որ Հովսեփի մոռցած է) Պիղատոս Երուսաղեմ կանչված է խռովության մը պատճառով:

Երիտասարդ մը, նաղարեթյի հյուանի մը որդին, կըսվի թե հեղափոխություն մը կկազմակերպեր հռոմեական կայսրության դեմ: Տարօրինակ է սակայն, որ մեր գաղտնի սպասարկության պաշտոնյաները ոչինչ գիտեն այս մասին, երբ խնդիրը քննած են, տեղեկագրած են, որ հյուանը տիպար և սքանչելի քաղաքացի մըն էր, և որեւէ պատճառ չունին իր դեմ: Բայց հրեական

հավատքի և օրենքի հին դուրս առաջնորդներ շատ տակնուվրա եղած էին ըստ Հովսեփի:

Անոնք կատերին իր ժողովրդականությունը, որ ուներ հրեական աղքատ դասակարգին մեջ: Անոնք Պիղատոսին ըսած էին, որ իբր թե Նազովրեցին հրապարակավ հայտարարած ըլլա, թե հուլն մը, հռոմեացի մը, և նույնիսկ փղշտացի մը որ պատվաբեր, պարկեշտ կյանք մը կապրի, նույնքան բարի մարդ մըն է, որքան հրեա մը, որ կսերտե Մովսիսական օրենքները:

Պիղատոս այս ըսվածները չէր ընդունած, բայց Տաճարին շուրջ գտնվող ժողովուրդը ևս սպառնացած է Հիսուսը մահապատիժ ենթարկել և սպաննել անոր բոլոր հետևորդները, ան որոշեք է հյուանը իր պաշտպանության տակ առնել և անոր կյանքը փրկել:

Պիղատոս չէր կրցած ըմբռնել վեճին իսկությունը: Եվ երբ հրեա քահանաներու հարցուց պատճառը իրենց բողոքին և ցատվին, անոնք պոռացին՝ «հերետիկոսություն», «դավաճանություն», և սաստիկ դրդվեցան: Վերջապես Պիղատոս իր մոտ կանչել կուտա Յեսուն (այս է Նազովրեցիին տրված անունը հրեաներին, բայց երկրին այս մասին մեջ ապրող հույներ միշտ Հիսուս կկոչեն) անձամբ քննություն մը կատարելու համար: Պիղատոս կխոսի անոր հետ քանի մը ժամ: Կհարցնե իրեն «վտանգավոր» վարդապետության մասին, որ Գալիլիո լճին եզերքներուն վրա քարոզած էր: Բայց Հիսուս կպատասխանե, թե ինք բնավ քաղաքականության ակնարկություն չէր ըրած: Ինք ավելի մարդուն հոգիով հետաքրքրված էր, քան մարդոց մարմիններովը: Ան ուզած էր, որ բոլոր մարդիկ դիմար եղբայրներ նկատեն և միակ Աստված մը սիրեն, որ հայրն է բոլոր արարածներուն:

Պիղատոս, որ կերևի լավ ուսումնասիրած էր ստոյիկյան վարդապետությունները և այլ հույն փիլիսոփաները, Հիսուսի խոսքերուն մեջ խռովություն հառաջացնող որևէ բան չէ գտած:

Համաձայն ինձի տեղեկություններ հաղորդողին, Պիղատոս ուրիշ փորձ մըն ալ կընե բարի մարդարեին կյանքը փրկելու համար: Պիղատոս միշտ կմեծե մահապատիժը գործադրելու ծրագիրը: Մինչ հրեա ժողովուրդը, քահանաներին դրդված և զայրացած, կատաղորեն դրդված էր: Երուսաղեմի մեջ այս բաներն առաջ շատ մը ըմբոստություններ տեղի ունեցած էին և շատ քիչ հռոմեացի զինվորներ կգտնվեին տրամադրելի: Կեսարիո մեջ գտնված հռոմեական իշխանությանց տեղեկագրված էր:

որ Պիղատոս լնազովորեցիի ուսումներուն զոհն էր դարձած: Ամբողջ քաղաքին մեջ ցույցեր ու դիմումներ կատարված էին, որ Պիղատոս պաշտոնանկ ըլլա, քանի որ կայսեր թշնամի մըն էր:

Դուք գիտեք, որ մեր կառավարիչները խիստ հրահանգ ունին իրենց օտար հպատակներու հետ հակառակ դիրքավորում չունենալու մասին: Երկիրը քաղաքացիական պատերազմն էր փրկելու համար Պիղատոս ի վերջո իր բանտարկյալը զոհեց: Հիսուս այս բոլոր բաներու ընթացքին հոգիի մեծություն մը և վեհանձնություն մը ցույց տված էր ամեն անոնց, որոնք զինք կատեին: Խաչվեցավ ան Երուսաղեմի խուժանին ոռնոցներուն, ծաղրին և խնդութներուն մեջ:

Հովսեփին ինձի ըսածները ասոնք էին. և խոսած ատեն իր ծերացած այտերեն արցունքներ կհոսեին: Ոսկի մը տվի իրեն երբ պիտի բաժնվեի իրմե. բայց ինք մերժեց և խնդրեց, որ իրմե ավելի կարոտի մը տամ: Իրեն ուղղեցի նաև կարգ մը հարցումներ բարեկամիդ Պողոսի մասին: Մոտեն չէր

ճանչնար զինք: Պողոս վրանագործ մը. եղած ըլլալու է, որ իր արհեստը ձգած է, որպեսզի կարենա սիրող և ներող Աստված մը քարոզել, որ այնքան տարբեր է Եհովայեն, որուն մասին հրեա քահանաներ միշտ կխոսին մեզի: Անկե հետո, Պողոս շատ շրջած է Փոքր Ասիո և Հունաստանի մեջ, գերիներուն քարոզելով, որ իրենք բոլորն ալ զավակներն են զիրենք սիրող հոր մը, և թե ամենուն, աղքատին թե հարուստին երջանկություն կսպասե, որոնք պարկեշտ ու բարի կյանք մը կապրին և բարիք կրնեն ամեն անոնց, որոնք կտառապին և թշվառության մեջ են:

Հուսամ հարցումներուդ պատասխանած եղա քեզ գոհացնելու աստիճան: Այս ամբողջ պատմությունը շատ անվնաս է մեր պետության ապահովության տեսակետով դիտված, Բայց մենք՝ հոռմեացիներս բնավ չենք կրցած հասկնալ այս նահանգին ժողովուրդը: Շատ կցավիմ, որ սպաննած են քու բարեկամդ Պողոսը: Երանի թե նորեն տուն գայի: Մնամ միշտ պարտաճանաչ եղբորորդիդ՝ Կլադիոս էնսա»:

